ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոսի

Բահման Բահադորի «Ահվազ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը աերո և տիեզերական նկարների վերծանման միջոցով» թեմայով ԻԴ.03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ:

1. Աշխատանքի արդիականությունը

Ատենախոսության այս բաժնում հեղինակը նշում է, որ քաղաքների զարգացումը և պլանավորումը դարձել է անհրաժեշտ առաջնահերթություն բոլոր երկրներում: Ուրբանիզացիայի արագ տեմպերով զարգացումը, որը բերում է գյուղերի դատարկման և քաղաքների ընդարձակման, իր հետևանքներով ու խնդիրներով ունի բարդ ու բազմակողմ բնույթ, որոնց անտեսումը մեծացնում է սոցիալ-տնտեսական դժվարությունները: Այդ նպատակով էլ աշխարհագրական համակողմանի ուսումնասիրությունները շատ կարևոր են այդ բարդ գործընթացները ճանաչելու և կանխելու, կամ էլ նվազեցնելու ուղությամբ:

Այդ նպատակով հեղինակը Ահվազ քաղաքի տարածքի մասին հսկայական ծավալ ընդգրկող տեղեկությունների հավաքման, մշակման և օգտակար ինֆորմացիայի վերծանման համար օգտվել է Աշխարհագրական տեղեկատվական համակարգից /GIS/ և հեռավար զոնդավորման տեխնոլոգիայից : Դրանց օգտագործման արդյունքում հաջողվել է ստանալ տվյալների հզոր փաթեթ, որի վերլուծությունն ու քարտեզագրումը հնարավորություն է տվել հեղինակին հանգելու լուրջ հետևությունների:

Արբանյակային աերոլուսանկարների, հեռահար զոնդավորման ծրագրերի և GIS-ի տվյալների գնահատման հիման վրա ուսումնասիրվել են Ահվազ քաղաքի 1955-2013 թթ. ժամանակահատվածի փոփոխությունները, բացահայտվել են քաղաքի դինամիկ զարգացման դրական ու բացասական կողմերը, առանձնացվել և ուսումնասիրվել են

քաղաքի տարածքային գոտիները, մշակվել են հրատապ խնդիրների ու ապագայի մարտահրավերների լուծման ուղիները և կայուն զարգացման հեռանկարները:

Այսպիսով՝ ատենախոսության թեման արդիական է:

2. Աշխատանքի բովանդակությունը և ձևավորման գնահատականը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացություններից ու առաջարկներից, գրականության ցանկից, աղյուսակներից, քարտեզներից, նկարներից և գծապատկերներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 138 տպագիր էջ:

Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է Խուզիստան նահանգի և նրա վարչական կենտրոն Ահվազ քաղաքի աշխարհագրական դիրքը, ֆիզիկաաշխարհագրական պայմանները երկրաբանական կառուցվածքը, լեռնագոյացման փուլերը, սալերի տեղաշարժերը, Զագրոսի լեռնային համակարգի առաջացման ու զարգացման մոդելները, մակերևութային ու ստորերկրյա ջրերի պաշարները, կլիմայական պայմանները:

Հեղինակը քննարկելով քաղաքի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, ռեսուրսները, կարողացել է բացահայտել դրանց դրական ու բացասական կողմերը, մյուս գլուխներում մշակել լուծման ուղիները, կայուն զարգացման հեռանկարները:

Երկրորդ գլխում քննարկվում է Ահվազ քաղաքի երկրաձևաբանական և երկրաբանական առանձնահատկությունները: Այստեղ հեղինակն առանձնացնում է ծալքավոր գոտիները, խզվածքները և կառուցապատման ու շինարարության համար վտանգավոր տեղամասերը: Տրված է նաև քաղաքների գեոմորֆոլոգիական երևույթների արբանյակային քարտեզ-նկարները՝ Լանդսեթ 2020-ի GIS միջավայրում:

Քննակվում է Քարուն գետի ավազանում կատարվող երևույթները (վարարումներ) և դրանց կանխելու ու մեղմելու ուղիները:

Հեղինակի կարծիքով Քարուն գետի տիղմերի և նստվածքների մաքրումը և գետի հունի շերտազատումը կնպաստի վարարումների նվազմանը և կթուլացնի հորդացման

արագությունը՝ կանխելով նյութական և մարդկային կորուստներն ու վնասները: Նշվում է նաև, որ Ահվազ քաղաքն ունի համեմատաբար տաք ու խոնավ կլիմա:

Երրորդ գլխում վերլուծելով առաջին և երկրորդ գլուխների համալիր տվյալները, հեղինակն առանձնացնում է Ահվազ քաղաքի տարածքային գոտիները և վերլուծում դրանց գործառնական նպատակները: Այստեղ հեղինակն առանձնացնում է Ահվազ քաղաքին բնորոշ մի շարք խնդիրներ՝ տարածական անընդմեջ (ոչ պլանավորված) ընդլայնում, բնակչության արագ աճ, շրջակա միջավայրի աղտոտվածության մեծացում, քաղաքային ենթակառուցվածքների ու ծառայությունների անբավարարության՝ 1 շնչի հաշվով, քաղաքի արվարձանների անհամաչափ զարգացում, կանաչ գոտիների պակաս, անհամաչափ բաշխում և այլն:

Վերլուծելով այս խնդիրները, հեղինակը հանդես է գալիս լուրջ և նպատակային առաջարկություններով: Նա առանձնացնում է քաղաքային գոտիների 2 խումբ՝ քաղաքային (ներառում է սպասարկման ոլորտը և կանաչ գոտիները) և ոչ-քաղաքային գործառույթ (ներառում է զինվորական, գյուղատնտեսական և անասնապահական գործառույթները):

Արդյունքում հեղինակն առաջարկում է գործառույթների 5 գլխավոր խումբ՝ ա) բնակելի, բ) կանաչ գոտի, գ) չկառուցապատված և ամայի, դ) հատուկ և այլ ե)ճանապարհային ցանց: Տրված է այդ գործառույթների համամասնությունը 2010թ –ին և դրանց քարտեզը 2013թ-ին: Բացահայտվում են այդ գոտիների ձևավորման և զարգացման հիմնախնդիրները և առաջարկվում հեռանկարային զարգացման ուղիները: Այստեղ հեղինակը հանդես է գալիս լուրջ, հիմնավորված առաջարկություններով:

Չորրորդ գլխում կատարվում է Ահվազ քաղաքի զարգացման հետազոտում՝ աերոտիեզերական լուսանկարների վերծանման միջոցով: Քննարկվում են քաղաքի տարբեր տարածքների և գոտիների գործառույթների փոփոխությունները 1955թ –ից մինչև 2013 թթ-ը: Այդ փոփոխությունները հատկապես մեծ են զինվորական (կապված Իրան-Իրաք պատերազմի հետ), բնակելի և արդյունաբերական գոտիներում, որոնք էլ առաջացրել են քաղաքի անհամաչափ զարգացմանը : Շատ կանաչ տարածքներ վերածվել են զորանոցների, բնակելի շրջանների և այլն:

Հինգերորդ գլխում հեղինակը քննարկում է Ահվազ քաղաքի էկոլոգիական վիճակի փոփոխությունները՝ տիեզերական լուսանկարների վերծանման և ԱՏՀ-ի միջոցով: Քննարկումները կատարվել են 1973-2013թթ. ժամանակահատվածում: Այդ ժամանակահատվածը հեղինակը բաժանում է 2 մասի՝ 1973-1990թթ. և 1990-2013թթ: Առաջին ժամանակահատվածում խիտ բուսականության գոտիներն ընդարձակվել են կապված մթնոլորտային առատ տեղումների հետ: Իսկ 1990-2005թթ. կանաչ գոտիների տարածքը խիստ կրճատվել է կապված երաշտների հետ: Ընդհանուր առմամբ, քաղաքի կանաչ գոտիներն ընդարձակվել են 1950 թ. 32 հա-ի փոխարեն, 2013թ. հասնելով 776 հա-ի: Սակայն, քաղաքի կենտրոնում և Քարուն գետի ավազանում կանաչ գոտին պահպանվել ու զարգացել է, իսկ մյուս շրջաններում այն զբաղեցնում է շատ փոքր տարածք:

Նշվում է, որ քաղաքի անհամաչափ զարգացումը փոխել է էկոլոգիական պատկերը՝ կանաչ տարածքները մանրացվել և տարանջատվել են, կրճատվել է կանաչ և բաց տարածքների միջև կապը և փոքրացել են քաղաքային կանաչ ու մեծացել բաց տարածքները, զբոսավայրերը: Արդյունքում խախտվել է քաղաքի էկոլոգիական հավասարակշռությունը: Այդ անհամամասնությունը լավ երևում է նկար 7-ում:

3. Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների պարզաբանման աստիճանը, դրանց արժանապատվությունը:

Ատենախոսության գիտական դրույթների և եզրակացությունների պարզաբանման աստիճանը և դրանց արժանահավատությունը գնահատելու համար կարևոր են հեղինակի կողմից բերված հետևյալ հիմնավորումները.

ա) Ահվազ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակը բացահայտելու համար հեղինակն օգտագործել է նորագույն մեթոդներ՝ ԱՏՀ համակարգերի և հեռավար զոնդավորման տեխնոլոգիաները: Դրանց օգտագործման արդյունքում հեղինակին հաջողվել է ստանալ տվյալների հզոր ու արժանահավատ փաթեթ, որի վերլուծությունն էլ հնարավորություն է տվել հանգելու լուրջ հետևությունների և հանդես գալու նոր առաջարկություններով:

բ) արբանյակային լուսանկնարների, և վերը նշված ծրագրերի ու տվյալների գնահատման հիման վրա ուսումնասիրվել են քաղաքի 1955-2013թթ. փոփոխությունները, բացահայտվել են քաղաքի դինամիկ զարգացման դրական ու բացասական կողմերը:

գ) աշխատանքի գիտական դրույթների հիմնավորման գործում կարևոր է նաև հեղինակի կողմից քաղաքային տարածքային գոտիների առանձնացումը և հիմնավորման սկզբունքները, որոնց հիման վրա էլ մշակվել ու առաջարկվել են հրատապ խնդիրների ու ապագայի մարտահրավերների լուծման ուղիները, ինչպես նաև կայուն զարգացման հեռանկարները:

դ) տիեզերական լուսանկնարների վերծանման և ԱՏՀ-ի միջոցով հեղինակը բացահայտել և հիմնավորվել է Ահվազ քաղաքի էկոլոգիական արդի վիճակը և լուծման ուղիները:

Նշված գիտական դրույթների հիմնավորումը և վերլուծությունը աշխատանքը դարձնում են արժանահավատ և գիտական արժեք ներկայացնող:

4. Ատենախոսության նշանակությունը գիտական և գործնական կիրառման նպատակով

Ատենախոսությունում հեղինակի կողմից բերված գիտական դրույթները, եզրակացություններն ու առաջարակությունները, առաջարկվող լուծումները կարող են օգտագործվել Իրանի տարբեր քաղաքների, նահանգային կենտրոնների դինամիկ զարգացման և կայուն զարգացման հիմնախնդիրները լուծելու նպատակով:

Քաղաքային տարածքային գոտիների առանձնացման հիմնավորումները կարող են հիմք հանդիսանալ խոշոր, հատկապես միլիոնանոց քաղաքների կայուն զարգացման, դրանց կենտրոնի ու ծայրամասերի միջև անհամաչափությունների վերացման և համաչափ զարգացման համար:

Ահվազ քաղաքի զարգացման առաջարկվող մոդելի իրականացման արդյունքում հնարավոր են լուծել տարբեր քաղաքներում և բնակավայրերում էկոլոգիական և սոցիալ-

տնտեսական անհամաչափությունները մեղմելու և աստիճանաբար վերացնելու հիմնախնդիրները:

5. Դիտողություններ և առաջարկություններ

Աշխատանքում մեր կողմից նկատվել են որոշ թերություններ.

- Ատենախոսության վերնագրում տրված է Ահվազ քաղաքի էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը: Մեր կարծիքով այս դրույթը թերի է քննարկված: Ռելիեֆի տարբեր ձևերն ինչպե՞ս են ազդում քաղաքի էկոլոգիական վիճակի վրա՝ մանրամասն չի հիմնավորված: Բացի այդ, էկոլոգիական վիճակի վրա ազդում են նաև այլ գործոններ:
- Աշխատանքում ներկայացված են տարբեր քարտեզներ ու քարտեզագրամներ: Լավ կլիներ, որ դրանք լինեին ավելի խոշորամասշտաբ և ավելի մանրամասն:

  Մեր կարծիքով I և II գլուխները կարելի է միացնել: Երկրաբանական զարգացման պատմությունը ներառվում է բնական պայմանների մեջ:
- Ատենախոսության դրույթները և դրանց համապատասխան վերլուծությունները որոշ գլուխներում ներկայացված են ոչ լրիվ:
- Եզրակացություններ բաժնում 4, 5 կետերը հիմնականում արտահայտում են հայտնի փաստեր: Լավ կլիներ դրանք ուժեղացնել և բերել գիտական տեսքի: Աշխատանքում կան նաև հաջող առաջարկություններ: Ուստի այդ բաժինը պետք է վերնագրել՝ «Եզրակացություններ և առաջարկություններ»:

Ատենախոսության տարբեր մասերում նկատվել են ուղղագրական, ոճական, մասնագիտական տերմինների որոշ թերացումներ:

6. Եզրակացություն

Չնայած մեր կողմից նկատված թերություններին ու դիտողություններին, ատենախոս Բահման Բահադորի «Ահվազ քաղաքի տարածքի զարգացման և նրա էկոլոգիական վիճակի վրա ռելիեֆի ազդեցության գնահատումը աերո և տիեզերական նկարների վերծանման միջոցով» թեմայով ատենախոսությունը գնահատում եմ որպես գիտական մակարդակով կատարված ավարտուն աշխատանք: Մեր կարծիքով այն լիովին բավարարում է Հայաստանի Հանրապետության ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների առաջադրված գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակ Բ. Բահադորին արժանի է ԻԴ. 03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա. Թ. Գրիգորյան

ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և
ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ
Ա.Թ. Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտ. քարտուղար Լ.Ս. Հովսեփյան

28.09.2021թ.